

N 15247 24 DEC 2015 «24» դեկտեմբեր 2015թ.

No 3716 - Ա

Կից ☐

Դեղի կարգավիճակ

նշումներ

«ԲԻՄՏԵԽ» ԳԻՏԱՀԵՏԱԴՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒՄԱՐ ՊԻՏԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՌԱՆՑ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՀԱՅՏԵԻ ԵՎ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՇՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԳՐԱՆՑՎԱԾ «ՖՈՒՐԱՑԻԼԻՆ ԱԿՆԱԿԱԹԻԼՆԵՐ, 1:5000, ՄԼ ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿ» ԵՎ «ԱԿԱՆՋԻ ԿԱԹԻԼՆԵՐ, ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿ, 15ՄԼ» ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՐ ԶԲԱՂՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 7-րդ կետի «ժ» ենթակետը, 12-րդ կետի «դ» ենթակետը, նկատի ունենալով ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 04/[266170]-15 գրությունը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 0114215815 գրությունը, համաձայն որի ընկերության «Վերլուծական լաբորատորիայում»՝ «Բիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության արտադրության «Ֆուրացիլին ակնակաթիլներ, 1:5000, 15 մլ ապակե սրվակ» և «Ականջի կաթիլներ, ապակե սրվակ, 15մլ» դեղերի լաբորատոր փորձաքննության ժամանակ պարզվել է, որ վերջիններս գրանցված չեն և չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում ընդունված որակի ցուցանիշներին, մասնավորապես «Ֆուրացիլին ակնակաթիլներ, 1:5000» ըստ դեղագրքի պահանջների պետք է լինեն պարտադիր մանրէազերծ, իսկ դրանք մանրէազերծ չեն եղել, ինչը կարող է հանգեցնել տեսողական օրգանի մի շարք ախտահարումների:

Տեսե՛ք. 24. 12 15 Տ. 16<sup>00</sup> ԼՈՐԵՆՏ

Նկատի ունենալով վերը նշվածը և նպատակ ունենալով կանխարգելել «Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության արտադրության «Ֆուրացիլին ակնակաթիլներ, 1:5000, մլ ապակե սրվակ» և «Ականջի կաթիլներ, ապակե սրվակ, 15մլ» դեղերի հնարավոր շրջանառությունը դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող սուբյեկտներում, ՀՀ դեղատներում կամ դեղատնային կրպակներում՝

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող սուբյեկտներին, դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտներին՝ իրենց մոտ շրջանառության մեջ գտնվող «Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության արտադրության «Ֆուրացիլին ակնակաթիլներ, 1:5000, 15 մլ ապակե սրվակ» և «Ականջի կաթիլներ, ապակե սրվակ, 15մլ» դեղերի առկայության դեպքում՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհապաղ դադարեցնել Հայաստանի Հանրապետությունում դրանց շրջանառությունը՝ այդ մասին տասնօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Առաջարկել՝ «Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ յոթօրյա ժամկետում կազմակերպել «Ֆուրացիլին ակնակաթիլներ, 1:5000, 15 մլ ապակե սրվակ» և «Ականջի կաթիլներ, ապակե սրվակ, 15մլ» դեղերի հետ հավաքումը ՀՀ-ում դեղագործական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտներից, բացառել դրա իրացման նպատակով հետագա սպառումը և գրավոր տեղեկանք ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն կատարված աշխատանքների, ինչպես նաև

ՀՀ օրենքների խախտմամբ դեղերի արտադրության հիմք հանդիսացած պատճառների վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության պետ Ա.Սահակյանին՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել միջոցներ «Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության արտադրության «Ֆուրացիլին ակնակաթիլներ, 1:5000, 15 մլ ապակե սրվակ» և «Ականջի կաթիլներ, ապակե սրվակ, 15մլ» դեղերի հնարավոր շրջանառությունը կանխարգելելու նպատակով:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը «Քիմտեխ» գիտահետազոտական ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությանը:



Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ